



## ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 10-ին, կիրակի, «Զատիկ, Յարու-  
թիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Գարնանային ջերմ ու պայծառ օր է: Ուխ-  
տավորների հոծ բազմութիւնը լցրել է մայ-  
րավանքն ու Մայր Տաճարը:

Առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ  
Հայրապետը, բահնայապետական լրիվ  
զգեստավորման մեջ, եկեղեցական թափորով  
և ամպհովանու տակ, առաջնորդվում է Մայր  
Տաճար, մատուցելու զատկական հայրապե-  
տական սուրբ պատարագը:

Մայր Տաճարի աջակողմյան և ձախա-  
կողմյան գասերում տեղ են գրավել Գերա-  
զույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձ-  
նաժողովի անդամները, Ճեմարանի գասա-  
խոսական կազմը, Մայր Աթոռի միաբանու-  
թիւնը և այլ հրավիրյալներ:

Սուրբ պատարագին ներկա են նաև բազ-  
մաթիվ ուխտավորներ Ֆրանսիայից, Լիբա-  
նանից, Սիրիայից և Ստամբուլից:

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցո-  
ղութիւնը կատարում է Մայր Տաճարի եր-  
գեցիկ խումբը:

Վեհ, հաղթական ու սրառուչ հնչում են  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Գովեա  
երուսազէմ զՏէր» մեղեդիները:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վե-  
հափառ Հայրապետը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,  
Մահումբն զմահ կոխեաց,  
Եւ յարութեամբն յոբով  
Մեզ զկեանս պարգևեաց»:

«Մեծ հրաշքեն հետո, լուսաբացին, բարի  
հրեշտակները վկայեցին. «Ձէ աստ, քանզի  
յարեաւ»: Աշակերտներն ու յուրաբեր քույ-  
րերը տեսան Յիսուսի դատարկ գերեզմանը  
միայն ու հալատացին:

Այս հավատքն է, ահա, որ անցավ ու  
պայծառացավ, և իբրև ոգեղեն արեգակ,  
լուսավորեց մարդկային կյանքը համայն,  
երկու հազար տարիներ շարունակ:

Եվ ամեն տարի, Ս. Եկեղեցին մեծ ավե-  
տիսը կուտա աշխարհին և մեզի թլորիս,  
թե Քրիստոս հարություն առավ մեռելնե-  
րեն, իր մահով մահը կոխելով և մեզի կյանք  
պարգևելով:

Մենք մեր մարմնական աչքերով չենք  
տեսներ դատարկ գերեզմանը մեր Տիրոջ,  
սակայն գուցե այսօր առավել ստուգությամբ  
կհավատանք Քրիստոսի հարության, քան  
մարդիկ երկու հազար տարիներ առաջ,  
վասնզի ստուգապես գիտենք, թե Քրիստոս  
իր հարությամբ իրապես կյանք պարգևեց  
մեզի: Հայ ժողովուրդը, իր բազմադարյան  
պատմությամբ և իր թողած ժառանգու-  
թյամբ, կենդանի վկայություն մը եղավ

Քրիստոսի հարության ու Անոր հավիտենական կենդանության:

Եթե Քրիստոս ճշմարտապես հարություն առած չըլլար և իր հարությանը կյանքի ուժեր պարզևած չըլլար հայ ժողովուրդին, անտարակույս, հազիվ թե հեռավոր հիշատակ մը միայն մնացած ըլլար մեր ազգի մասին:

Դարերու ընթացքին քանի՜-քանի՜ անգամներ մեր ժողովուրդը մահվան տանջանքները ապրեցավ ու գերեզման իջավ, բայց ան միշտ վերածնավ շնորհիվ իր հավատքին, թե մահը կայարտվի հարությանը: Փրկիչը մեր Քրիստոս «Անշախի մահուամբ փրկեաց զմեզ և փրկեացէ, քանզի յուսացեալ ենք եթէ տակաւին փրկեացէ» (Բ Կորնթ. Ա 11):

Քրիստոսի հարության ավետիսը, նաև հայոց համար, եղավ փայլատակումը երկրորդ «եղիցի լոյս»-ին, եղավ հաղթությունը ընդդեմ մահու, եղավ սկիզբը փրկության, եղավ ճանապարհը հավիտենական կյանքին:

Եվ տակալին, հայ ժողովուրդը Քրիստոսի հարության մեկ նոր վկայությունը գտավ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ, որով առավել պայծառացավ իր մեջ հավատքը Միածին Որդվունց հարության նկատմամբ: Փրկչի իջման խորհրդով, Վահագնի հրեղեն ոգին, այլակերպյալ ու սլայծառակերպյալ, վերստին ծնավ հայ ժողովուրդի հոգվունց մեջ, և առավել շիկացավ ու միածուլվեցավ քրիստոնեական նոր հավատքը:

Եվ ահա, որպես վիմակերտ վկա Քրիստոսի հարության և Անոր իջման ի Հայաստան աշխարհ, բարձրացավ անկրկնելի կոթողը այս, Մայր Տաճարը ամենայն եկեղեցաց հայոց՝ Ս. Էջմիածինը:

Դարերու հոլովույթով, հայ ժողովուրդը, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը դավանեցավ իբրև պատմական անհերքելի ստուգություն, որպես ոգեկան բացարձակ արժեք:

Մեր նախնիք, Քրիստոսի հարության հավատքով, առավել հավատացին Լուսավորչի տեսիլքին, և իջման տեսիլքով առավել հավատացին Քրիստոսի հրաշալի հարության:

Հայոց քրիստոնեությունը ազգային եղավ ի սկզբանե և այդպես ալ մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերու գյուտով և Ս. Վարդանի արդարության ու ազատության շեփորումով:

Այսպես և միայն այսպես է, որ մենք հայերս վավերապես քրիստոնյա մնացինք և պիտի մնանք, և իրավ ու հարազատ ապ-

րումով պիտի հավատանք Քրիստոսի հարության հրաշքին, աշխարհի բոլոր բոլոր եկեղեցիներու հետ անբաժանորեն եղբայրացած Քրիստոսի սիրունց մեջ:

Հայ հավատացյալ ժողովուրդը, Քրիստոսի հարության շնորհներով, հավատաց իր կյանքի ուժերուն, հավատաց իր հոգիի լույսին, հավատաց հավերժության, ու այդ հավատքով կտուց և ստեղծագործեց:

Մեր ժողովուրդը այսօր ալ ստուգապես կզգա, թե նույն հավատքով է, որ պիտի ապրի իր նախնյաց ոգիով, պիտի շարունակե իր ստեղծարար առաքելությունը այս աշխարհի վրա և պիտի հասնի իր ազնիվ ու արդար երազներու իրականացման: Մարդու կյանքը, առավել ևս ժողովուրդի մը կյանքը, և իրավ մարդկայինը այդ կյանքին մեջ, ուրիշ բան չէ, եթե ոչ ոգեկան առաքելության մը իրագործումը այս արևին ներքև:

Հայ ժողովուրդը այլ բանի չի տենչար, բայց միայն ունենալու ափ մը ազատ հող, բաժակ մը լույս և խաղաղ կյանք, շարունակելու համար իր առաքելությունը, արդարացնելու համար իր կոչումը աշխարհի ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ: Այս նվիրական իղձերք, մեր օրերուն, կյանքի կկոչվին ահա մեր վերածնած Մայր Երկրին մեջ ու հետզհետե կամրապնդվին անոնք վճիտ ու վճռական:

Վկա է Աստված, վկա է աշխարհն ամբողջ, թե անցյալի մեջ նահատակված մեր ժողովուրդը, այսօր իր Մայր Երկրին մեջ տերը դարձած իր հողին ու ճակատագրին, կյանքի ապահով ու խաղաղ պայմաններու մեջ, ինչպիսի՜ լուսաշող իմացականությանը, ինչպիսի՜ ազնիվ ու ստեղծարար կիրքով և կատուցելու տենդով տոգորված, կկերտե իր նոր կյանքը, վերստին պատվո տեղ մը գրավելով մշակույթ ստեղծող ժողովուրդներու կողքին: Հայոց հինավուրց ազգը, իր նոր կյանքով, հայրենի սուրբ հողի վրա ստեղծած նոր արժեքներով, անտարակույս թե կհանդիսանա մեր ժամանակներու՝ ոգեկան առաքելություն մը կրող ու կենսագործող հառաջադեմ ազգություններեն մին:

Հայ՛ ժողովուրդ, դուն աճած ու պայծառակերպված ես Քրիստոսի հարության և իջման շնորհներով, և դարերու ընթացքին ապրած ես ու անմահացած արիության բազում գործերով:

Եվ ինչպես անցյալի փառքի օրերուն, այսօր ալ կգտնվիս նույն արիության գործերու իրականացման լուսավոր ճամբուն վրա:

Հայ ժողովուրդ, ուրեմն ծանրի գրեզ և հավաքական գիտակցված միասնությամբ, իրապես մեկ ու անբաժան, սիրով եղբայրացած ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, հավատարիմ մնա քու նախնյաց սուրբ հավատքին, քու կյանքի ուխտին և մեր օրերու քու նոր վերածնունդին և քու առաքելությանը:

**«Եւ մարտիր զբարոք մարտն հաւատոց. և բուռն հար զկենացն յախտենից՝ յոր կոչեցարն» (Ա Տիմ. Զ 12):**

Նախախնամության ձեռքով մեր ազգին շնորհված ու պատմականորեն նվիրագործված ոգեկան առաքելությունը դրոշմված է Քրիստոսի հարության հավատքով և Ամոր իջման խորհրդով ի Հայաստան աշխարհ:

**Փնռք Քրիստոսի լույս հարության:**  
**Փնռք հայ քրիստոնեության:**

Սուրբ Զատիկի լուսաշող այս ժամին, երբ հարության շնորհները նորեն կիջնեն հայ աշխարհին և մեր ամենուս հոգիներուն մեջ, Մենք, ծունկի եկած Իջման այս հրաշք Տաճարին մեջ, կադրթենք, որ այդ ափ մը հայոց հողը միշտ ազատ, միշտ ապահով և միշտ բերրի մնա, որ հայոց սրտերուն բաժակներն ամեն միշտ լեցուն ըլլան իմանալի լույսով և միշտ խաղաղ մնա կյանքը մեր ազգին և վերածնած երկիրը մեր հայրենի:

Ավելի լույս և խաղաղություն հայ ժողովուրդին, Մայր Հայաստանին:

Ավելի լույս և խաղաղություն համայն աշխարհին, բոլոր ազգերուն:

**«Քրիստոս յարեմու ի մեռելոց»:**

**Ամեն»:**

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, երևանի ռազմական ձայնասփռվում է

Վեհափառ Հայրապետի գատկական քարոզը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Վեհարանի զահասրահը՝ շնորհավորություններ ընդունելու:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի զառկական տոնը շնորհավորում է լուսաբարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրուրյանը:

Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում է նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բարձրաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը:

Խոսք առնելով Հայոց Հայրապետը, շնորհավորում է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի մեծագույն առնը՝ Զատիկը, և օրհնելով բոլոր ներկաներին, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ Ս. էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և հայ ժողովրդի բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է գատկական Իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության և հյուրերին:

Շնորհավորության և բարեմաղթության բաժակաճառեր են արտասանվում Մայր Աթոռի անասանության, Վեհափառ Հայրապետի կենաց արևատության, Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության և բարգավաճման համար:

Խմբովին երգված Տերունական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ փակվում է գատկական տոնի հանդիսության նվիրված ընդունելությունը:

